№ 179 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 21 1904 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 21 № 179

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պորտ-Արտուրի շրջանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խօլերայի դէմ. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Թիւրք-ամերիկական ընդհարումը. Արտաքին լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եւրոպական գրականութիւնից։

ՊՈՐՏ-ԱՐՏՈՒՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Հեռագրական գործակալութիւնը տուել է մեզ տեղեկութիւններ Պորտ-Արտուրի շրջանում կատարվող եղելութիւնների մասին մինչև օգոստոսի 14-ը։ Առևտրական գործակալութիւնը, անգլիական «Daily Telegraph» լրագրի հեռագիրներից քաղուածք անելով, տալիս է տեղեկութիւններ իրերի այն դրութեան մասին, որ գոյութիւն ունէր Պորտ-Արտուրի շրջանում օգոստոսի 13-ին։

Գայլեան սարերից, որոնք գտնվում են Պորտ-Արտուրի հիւսիսում, դէպի Դագուշան ձգվող լեռնային տարածութիւնը բռնված է եապօնացիներով։ Այստեղ եապօնացիները դրել են մինչև 300 թնդանօթներ։ Դրանցից տասը արագաձիգ թնդանօթներ են, որ ղեկավարվում են ծովային զօրագնդով։ Հաշուի մէջ չեն առնված այն թնդանօթները, որոնք ծառայում են դաշտային կռւի համար։ Բացի այդ գործի են դրված բերդային թընդանօթներ, որոնք բերված են Եապօնիայի զանազան բերդերից։ Այդ գծից եապօնացիները կարողութիւն ունեն ռմբակոծել սարերը։

Ռուսները, բացի ծանր թնդանօթներից, ունեն հարիւր հատ թեթև արագաձիգ գործիքներ։

Իտշան սարի մարտկոցը, որ գտնվում է եապօնացիների ձեռքին, մատչելի է դարձնում յարձակման համար Պորտ-Արտուրի առջև գտնվող ընդարձակ տարածութիւնը, սակայն եապօնական հետևակ զօրքը չէ վստահանում այդ ուղղութեամբ առաջ ընթանալ, երկիւղ կրելով վառօդի պահեստների պայթումներից։ Իտշանից եապօնացիները կարող են ռմբակոծել նաև ռուսական այն ամրութիւնները, որոնք գտնվում են արևելքում։ Այսպիսով այդ ամրութիւնները ենթարկվում են խաչաձև կրակի ազդեցութեան։

Աղաւնու ծովախորշը գտնվում է եապօնացիների ձեռքին, իսկ Լաօտեշանը դեռ ռուսների ձեռքումն է։

Պորտ-Արտուրում գտնվող եապօնական լրտեսները աշխատում են կտրել այն ելեքտրական հաղորդիչները, որոնք տարված են դէպի ֆուգասները։

Եապօնացիները գրաւելով Իտշան, յոյս ունեն արևմուտքից յարձակում գործել բերդի վրա, առաջ մղելով դէպի տափարակը մեծ քանակութեամբ զօրքեր։

Ռուսները կատաղի դիմադրութեամբ պաշտպանում են իրանց ամեն մի քայլը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՕԼԵՐԱՅԻ ԴԷՄ

Պետերբուրգի Բարձրագոյն հաստատված յանձնաժողովը ժանտախտի և խօլերայի դէմ ստացել է հետևեալ պաշտօնական տեղեկութիւնները խօլերայի ընթացքի մասին Պարսկաստանում։

Պարսկաստանի սահմաններում խօլերան շարունակում է առաջ շարժվել Թէհրանից Թաւրիզ։ Այդ ճանապարհին համաճարակն արդէն հասել է մինչև Զէյտան և Նիկպէ գիւղերը, որոնք Թաւրիզից 250 վերստի վրա են։ Քէրբալաթում համաճարակն ահագին զոհեր է տանում։ Ռուս դեսպանի օգոստոսի 6-ին հաղորդած տեղեկութեան համեմատ՝ ուխտագնացութիւնն ամբողջ Պարսկաստանում արգելված է, իսկ Թէհրանը պաշտպանված է կարանտինով։ Քիրմանշահում, Համադանում և Կազվինում խօլերան համարեա դադարել է։ Թէհրանում նա զգալի կերպով պակասել է։ Մէշէդում յուլիսի 26-ից մինչև օգոստոսի 1-ը մեռել է 417 մարդ, օգոստոսի 1-ին 42, 2-ին—54, 3-ին—28, 4-ին—32, 5-ին—36, 7-ին—30, 8-ին—43, 9-ին—29 մարդ։ Օգոստոսի 8-ին Էնզէլիում եղել է 5 դէպք։

Ռուսաստանի սահմաններում, ինչպէս արդէն արձանագրել ենք, խօլերան մուտք է գործել Անդրկասպեան երկիրը—Մերվ քաղաքը և նրա մօտ եղած Կաախկ աւանը։ Խօլերան հաւանօրէն բերել են Պարսկաստանից փախստական մահմեդականները. առաջ նա մտել է Կաախկ, իսկ այնտեղից էլ անցել է Մերվ։

Առ այժմ Մերվի շրջանից դուրս դեռ ևս կասկածելի հիւանդութեան դէպքերի մասին լուրեր չեն գալիս։

Ինչ կասկած, որ անհրաժեշտ է հեռագրով ամեն կողմ հաղորդել ամեն օր պատահած հիւանդութեան դէպքերի մասին։ Աւելի լաւ է մարդիկ գիտենան, ճանաչեն իրանց վրա գրոհ տուող թշնամու ուժը, նրա որակն ու քանակը, քան, չը սարսափեցնելու նպատակով, ծածկել հասարակութիւնից վերահաս չարիքը և ստիպել մարդկանց կակուղ բարձերի վրա հանգիստ ննջել, փոխանակ վտանգաւոր կռուին պատրաստվելու։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կասպից ծովի Կրասնովոդսկ նաւահանգստում նաւերի ու նաւակների շարժման ու կանգնելու համար որոշված են հետևեալ ժամանակաւոր կանոնները. 1) Նաւահանգիստ մտնող բոլոր նաւերն ու նաւակները պէտք է նախապէս մօտենան նաւահանգստի մուտքի մօտ կանգնած պահապանին և հետևեալ տեղեկութիւնները տան. ա) ո՞ր նաւահանգստից է գալիս նաւը, բ) ե՞րբ է դուրս եկել այդ նաւահանգըստից, գ) մտե՞լ է արդեօք ճանապարհին ուրիշ նաւահանգիստներ և ո՞րոնք են դրանք. դ) ունեցե՞լ է արդեօք յարաբերութիւն ճանապարհին ուրիշ նաւերի հետ, ո՞րոնց հետ յատկապէս և չը կա՞յին արդեօք այդ նաւերի վրա խօլերայով հիւանդներ կամ կասկածելի հիւանդներ, ե) կա՞ն արդեօք նաւի վրա խօլերայով հիւանդներ կամ կասկածելիներ։ 2) պահապանի հարցաքննութիւնից յետոյ նաւը պէտք է կամ գնայ ներսը կամ կանգնի պահապանի ցոյց տուած տեղը՝ սանիտարական բժշկական և այլ միջոցների դիմելու համար։ 3) պարսկական ափերից կամ ներքին նաւահանգիստներից եկող նաւերը, որոնց վրա խօլերայով հիւանդ կայ պէտք է պարզեն կարանտինային դեղին դրօշակը։ 4) ներքին նաւահանգիստների եկող պօստային ու մարդատար նաւերը, որոնց վրա բժիշկ կայ և որոնք ազատ են խօլերային հիւանդներից, ազատվում են վերահսկողութիւնից։

Ներքին գործերի մինիստրութեան մէջ հարց է յարուցված բոլոր կօնսէրվներ պատրաստող գործարանների վրա նշանակել բժշկական վերահսկողութիւն, նման ծովային վարչութեան պէտքերի համար եղած գործարանների վերահսկողութեանը։ Ծովային վարչութեան համար կօնսէրվներ պատրաստող գործարաններում մշտապէս հսկում է մի յանձնաժողով, որ կազմված է զինւորական և ծովային բժիշկներից և օֆիցէրներից։ Մտադրութիւն կայ հիմնելու այդպիսի յանձնաժողովներ, առանց օֆիցէրների, բայց ոստիկանական ծառայողների մասնակցութեամբ՝ այն գործարանների մօտ, որոնք պատրաստվում են կօնսէրվներ ընդհանրութեան գործածութեան համար։

Առողջապահական յանձնաժողովը ամսիս 20-ին քննելով Թիֆլիսի Կրուժօկը, գտաւ որ այնտեղ, ուրտեղ հաց են պահում, դրված են հացի հետ միասին կօշիկներ, ոտաշորեր և այլն, իսկ սառցարանից փչում է եղել գարշելի հոտ. նոյն իսկ գտել են մի կտոր հոտած միս և 6 հատ էլ հոտած որսի թռչուններ։

Պետերբուրգի կանանց բարձրագոյն կուրսերը մտնելու ցանկութիւն յայտնողների թիւն այս տարի հասել է 1,209 հոգու. մի թիւ, որի նման դեռ տեսնված չէր։ Շուտով վերջանում է խնդրատուութեան ժամանակը։ Բոլոր խնդրատուներին պատասխանելու են պօստով, որպէսզի օտար քաղաքացիներն ստիպված չը լինեն նորից Պետերբուրգ հաւաքվելու։

Փօթիում կազմակերպվել է մի բանւորական արտել կամ ընկերութիւն։ Նրա կանոնադրութիւնն արդէն հաստատվել է և արդէն գրվել են 300-ի չափ մարդ։ Արտէլի դիւանը հոգ կը տանի գտնել գանձապահի, ապրանք ընդունողի կամ բաց թողնողի և այլ պաշտօններ էլ, բացի իր արտէլի համար աշխատանքներ վեր առնելը։

Օգոստոսի 18-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային սանիտարական գործադիր յանձնաժողովի նիստը։ Որոշվեց խնդրել դումային շտապեցնել Պապկօվի տխրահռչակ ջրաղացի գնումը։ Ընտրվեց մի փոքրիկ մասնաժողով, որը պէտք է հոգայ Կուր գետի աջ բազուկը մաքրելու խնդրով։ Ձիաքարշի անօնիմ ընկերութիւնը բարեհաճել է մերժել սանիտարական յանձնաժողովի որոշումը, որով խնդրվում է ցէմէնտով ծածկել այն բոլոր տեղերը, ուր երկար կանգ են առնում ձիաքարշի վագօնները կամ օժանդակ ձիերը։ Այդ տեղերում առաջացած գարշահոտութիւնը չէզոքացնելու միակ նահապետական միջոցն է մինչև օրս կիր ածելը։ Յանձնաժողովը որոշեց իր վճիռն իրագործել քաղաքի տեխնիկների ձեռքով անօնիմ ընկերութեան հաշւով։ Քաղաքի 6-դ մասի բանւոր ազգաբնակութիւնը Կուրի ջուրն է խմում, որովհետև այդ մասում ջրանցքի խողովակներ չը կան։ Այդ առիթով յանձնաժողովը տուեց հետևեալ վճիռը. խիստ ցանկալի է, որ ջրանցքի խողովակներ տարվեն Վօրօնցօվի փողոցով, և որոշվեց այդ մասին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Գրական մի նոր դպրոց *)

(Le naturisme)

II

Սէն-Ժորժ դը Բուէլիէից յետոյ, նատուրիզմի գլխաւոր սիւներից մէկն է Մորիս Լըբլօն։ Առաջինը, եթէ նատուրիզմի նախնական շարժումը տուողը, գրական այդ նոր ուղղութեան ստեղծողը եղաւ, երկրորդը՝ այդ շարժումի, այդ ուղղութեան կանոնաւորողն ու կազմակերպողը հանդիսացաւ։ Շատ երիտասարդ, բայց շատ ամուր կրթութեան տէր, Մորիս Լըբլօն գրական հրապարակ եկաւ 1896 թւին, իմաստասիրական, բարոյական և իմացական մեծ արժէք ունեցող մի գործով՝ Essai sur le naturisme—Նատուրիզմի նախափորձ աշխատութեամբ։ Նախափորձը՝ որ գեղարուեստի, գրականութեան սօցիալական, հասարակական դերի մասին նոր մտքերով և նշմարներով լեցուն էր, մեծ հաճութեամբ ընդունվեց երիտասարդութեան կողմից, որովհետև նա այնտեղ խտացած գտաւ իր ըղձանքներն ու ձգտումները։ Այդ գիրքը հետաքրքիր էր. մանաւանդ նրանով, որ բացի գրական մի քանի խոշոր դէմքերի, ինչպէս Ստեփան Մալլարմէի, Մորիս Բարէսի, Էմիլ Վէրհարընի, Սէն Ժորժ դը Բուէլիէի նուիրված գեղեցիկ ուսումնասիրութիւններից, հեղինակը հռչակում էր սիմբօլիզմի վերջնական սնանկութիւնը և վերադարձը դէպի գրական այն մեծ շարժումը, որը ստեղծել էին տասն և ութերորդ դարում Դընի Դիտրօն, Ժան-Ժակ Ռուսօն և Անսիկլօպէդիստները, և որը յետոյ շարունակվել էր Օգիւստ Կօնտի դրապաշտութեամբ (positivisme) և Զօլայի բնապաշտութիւնով (naturalisme)։ Լըբլօն՝ փառաւորում էր XVIII-րդ դարի գրականութիւնը, հրաւիրում էր վերադառնալ Ֆրանսիայի գրական այդ մեծ աւանդութեան, որովհետև, ինչպէս մեր ընթերցողներին յայտնի է, Վօլտէրների, Դիդրօների, Ժան-Ժակ-Ռուսօների և նրանց գրչի ընկերների գործն եղաւ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։ Նրանք է, որ անարդարութեան շէնքի հիմքերը ցնցեցին ու ժողովուրդի, տառապող, արիւնաքամ եղող ժողովուրդի մութ գիտակցութեան մէջ ցոլացրին իրանց մտածումի ջահերը։ Գրականութիւնը՝ այդ շրջանում գերազանցօրէն հասարակական նկարագիր ունէր. նա ձգտում էր դառնալու ժողովրդի ուսուցիչը, առաջնորդը։ Վօլտէր՝ յեղափոխութեան նախակարապետների ամենաարիստօկրատն ու պահպանողականը, հակառակ իր աստուածպետական թունդ համոզումներին, կռվում էր կաթոլիկ եկեղեցու, ազատ մտածումի այդ ամենակատաղի թշնամու դէմ։ Ռուսօ՝ իր Ընկերային Դաշնագրով (Le contrat social) հռչակում էր ճնշված, անարգված քաղաքացու անբռնաբարելի իրաւունքները։ Մարդու վատթարացումի պատասխանատու բռնելով տիրապետող անարդար կարգերն ու թունաւորված, կեղծ քաղաքակրթութիւնը, քարոզում էր ժողովրդական կառավարութեան, հանրապետութեան անհրաժեշտութիւնը և իր Նոր Էլօիզով (LaNouvelle Héloïse) ջատագով էր կանգնում բնական ու ազատ դաստիարակութեան։ Նրան՝ աստուածապաշտ ու երկիւղած Ռուսօին ենք պարտական հասարակական գիտութիւնների ներկայ արագ ու գեղեցիկ զարգացումը։ Նա է, որ ընկերական կազմակերպութեան դէմ ուղղած իր խորապէս տրամաբանական ու ուժգին քննադատութիւններով բաց արեց ապագայ ընկերաբանի առաջ աւելի բանական, աւելի արդար ու աւելի ներդաշնակ յղացումների ճանապարհը։ Ռուսօն նախահայրն է Կարլ Մարկսի, Տօլստօյի և նրանց նման մեծ ու բեղուն խորհողների։ Իսկ Դիտրօ՝ այդ վերանորոգող խմբի ամենաազատականն ու արմատականը՝ կուեց հասարակական ցաւի բոլոր երեսների դէմ հաւասարապէս։ Մինչդեռ Վօլտէր և Ռուսօ մաքառել էին մէկը բացառապէս կղերական, իսկ միւսը քաղաքական ու հասարակական չարիքների դէմ, Դիտրօ՝ անխտիր մերկացրեց և՛ կրօնական և՛ քաղաքական ու հասարակական ստութիւնները։ Այնպիսի մի ժամանակում, երբ անգործութիւնը, ուրիշներին աշխատեցնելով հանդարտ վայելելը բարձրութեան, ազնուականութեան նշան էր համարվում, Դիտրօ՝ մտքի ու սրտի մի հոյակապ թռիչքով փառաբանեց, աստուածացրեց աշխատանքը, որը կրօնքն անգամ դատապարտել, անիծել էր, առաջին մարդուն դրախտից վռնդելով և իր ճակատի քրտինքով հաց ճարել ստիպելով։ Դիտրօ՝ աշխատանքին տալով իր բուն կարևորութիւնը, յեղաշրջեց տիրող հասկացողութիւնները։ Աշխատաւոր, հարստահարված ժողովուրդը իր իսկական նշանակութեան, արժանիքի գիտակցութիւնն ունեցաւ. իսկ անգործ, ձրիակեր դասակարգը իր փառքի, ամբարտաւանութեան պատուանդանից ցած եկաւ։ Դիտրօյի մեծ արժանաւորութիւնը՝ հասարակական չարիքի դէմ մղած այս արգաւանդ կռւի սահմաններում չէ ամփոփվում։ Նա յեղաշրջել է և գրական հասկացողութիւնները։ Նա եղաւ հիմնադիրը գրական մի քանի սեռերի, որ մինչև այն ժամանակ անծանօթ էին, ինչպէս գրական և գեղարուեստական քննադատութիւն, ընկերային վէպն ու դրաման։ Երաժշտութեան մասին Գլիւկի ուղղած իր նամակներում Դիտրօ պարզել էր այնպիսի նոր ու հանճարեղ տեսութիւններ

---

*) Տես «Մշակի» № 38.

խնդրել ուպրավային։ Որոշվեց խնդրել զինուորական սանիտարական գործադիր յանձնաժողովից միջոցներ ձեռք առնել մաքրելու Նաւթլուղի ձորը, որ կեղտոտել են այն կողմերում եղած զօրքերը։ Բացի դրանից, որոշվեց խնդրել ուպրավային՝ մի նոր տեղ ևս նշանակել Նաւթլուղում աղբ ածելու համար։ Եղան և ուրիշ շատ մանր-մունր որոշումներ, ինչպէս օրինակ՝ «Կրուժօկ»-ի ամառային շէնքը քննելու և այնտեղ բուրող մշտական գարշահոտութեան պատճառը որոնելու հարցը, Կախէթեան հրապարակի վրայի տախտակէ ժամանակաւոր խանութները քանդելու և ուրիշ շատ երկրորդական հարցեր։

—

Թիֆլիսի ութերորդ քաղաքամասում շուկայի կառավարիչ պ. Բաբեանը ձերբակալել է 150 տոպրակ փչացած ալիւր, որի համար կազմված է հարկաւոր արձանագրութիւնը։

—

Վարշաւայում ուսանողները հիմնել են իրանց «ուսանողական խանութը», որ ահա 8 ամիս է գոյութիւն ունի Մարշալկօվսկի փողոցի վրա։ Ութ ամսում ուսանողական խանութի դրամագլուխն արդէն հասել է 20,000 ր., իսկ բաժնետէրերի թիւը 50 հոգու։ Վերջին ժամանակներս խանութի մրցակիցները լուրեր են տարածել, որ ուսանողական խանութը սնանկացել է, այն ինչ նրա հիմնադիրներն այս աշունքին ուզում են ընդարձակել իրանց շրջանառութիւնը։

—

Վեցերորդ քաղաքամասի առողջապահական հոգաբարձու պ. Քանանեանը գտնելով Մահմէդ Հուսէյին Նաբիի թէյատունը, Մաշադի Մահմէդ Նասիր օղլու, Մաշադի Համզա Մէսա օղլու ճաշարանները և Դաւիթ Միրզօյեանի տրակտիրը հակաառողջապահական դրութեան մէջ, կազմել է արձանագրութիւն և յանձնել դատարանին, իսկ մինչև վճիռ կայացնելը, խնդրում է ոստիկանապետին հարկադրել, որ բոլոր նկատած պակասութիւնները ուղղեն։

—

Թիֆլիսի քաղաքային տեխնիկ պ. Զախմախսազեանը, յայտնում է առողջապահական գործադիր յանձնաժողովին, որ առողջապահական հոգաբարձուներից և բնակիչներից շատերը գանգատվում են իրանց քաղաքի փողոցները բաւարար կերպով չը մաքրելու մասին։ Որովհետև ինքը իբրպէս նշանակված է հսկող փողոցները ջրելու վրա, որի հետ կապ ունի և մաքրութիւնը, ուստի ինքը կարող կը լինէր վերացնել այդ տրտունջները, եթէ քաղաքային մշակները և սայլերը, որոնք նշանակված են փողոցները մաքրելու և աղբը դէն ածելու համար, թոյլ տային իրան ազատ ժամանակն օգտվել նրանցից, սախպելով նրանց մաքրելու այդ կեղտոտութիւնները։ Այդ մասին խնդրում է առողջապահական յանձնաժողովի կարգադրութիւնը։

—

ՏԱՇԿԵՆՏԻՑ մեզ գրում են. «Այստեղի ամառային թատրօնում յուլիսի 23-ին կայացաւ պ. Բոյաճեանի կօնցերտը, մասնակցութեամբ տեղիս սիրողներ՝ պ.պ. Իւգինի, Ֆելիցիանտի և Լիւինսօնի։ Պ. Բոյաճեանը ոչ մի ջանք չէր խնայել կօնցերտը հետաքրքիր դարձնելու։ Այն փոքրաթիւ մասը, որ ներկայ էր կօնցերտին, գոհ սրտով հեռացաւ թատրօնից։ Պ. Բոյաճեանը ունի բաւական ուժեղ և դուրալի ձայն։ Հասարակութիւնը հաւանեց George Hue-ի ռոմանսը «Gai pleuré en rêve», Դենցի յայտնի ռոմանսը և հայկական ժողովրդական երգերը իր ժողովածուից։ Հասարակութեան անընդհատ բիսերին պարոնը երգեց ծրագրից դուրս մի քանի երգեր ու արեաներ ևս։ Վատ չէին և սիրողները, որոնցից պ. Իւգինը արժանացաւ բուռն ծափահարութեան։ Ընդհանուր մուտքը մօտաւորապէս 160 ր. էր»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Ինչպէս յայտնի է քաղաքիս շրջակայ շատ գիւղեր եղջիւրաւոր կենդանիների մէջ տարածված է ժանտախտ հիւանդութիւնը։ Դժբաղդաբար, ինչպէս լսում ենք, այդ հիւանդութիւնը հետզհետէ մեծ ծաւալ է ստացել և տարածվել է ուրիշ շատ գիւղերում էլ։ Գաւառական անասնաբոյժը օգնականներով շրջում է համարեա բոլոր գիւղերը և կենդանիներին պատուաստում հակաժանտախտային շիճուկով։ Այժմ վնասված գիւղերից բոլորովին արգելված է կենդանիներ և կաթնային մթերքների՝ կաթի, իւղի, պանրի ներմուծումը քաղաքիս մէջ։ Այս հիւանդութիւնը մեծ վնասներ է պատճառում գիւղացիներին»։

—

ՍՏԱՒՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Ամառը մեզ մօտ անցնում է շատ ուրախ. շաբաթը մի քանի անգամ լինում են թէ ներկայացումներ և թէ համերգներ գլխաւորապէս բարեգործական նպատակով. տեղիս հայ գաղութը այդ ներկայացումներին ներկայ է լինում և ուրիշ ոչինչ, ոչ ոք չէ ուզում ձեռնարկել նոյն տեսակ երեկոյթների յօգուտ մեր ծխական դպրոցի չքաւոր աշակերտների, կամ տեղիս աղքատախնամ ընկերութեան. այդ երկու հայ հիմնարկութիւններն էլ կարօտ են նիւթական աջակցութեան։ Ամսիս 28-ին չորեքշաբթի տեղիս ժողովրդական թատրօնում կայացաւ մի հայերէն ներկայացում, ձեռներէցութեամբ Ե. Բաղդասարեանցի և դերասան Կարինեանի. խաղացին «Օտարոտի մարդ» Լերմօնտովի «Խէչօյի թուղը» և «Արջ» Ա. Չեխովի։ Ներկայացումը անցաւ շատ աջող, նամանաւանդ «Օտարոտի մարդ» դրաման, գլխաւոր դերերը ծանրացած էին դերասան Կարինեանի և Բաղդասարեանի վրա, որոնք և շատ աջող կատարեցին այդ պատասխանատու դերերը, լաւ էր նոյնպէս և պ. Տէր-Սիմէօնեանը Խէչօյի դերում. Թատրօնում ներկայ եղած հասարակութեան մեծ մասը օտարազգիներ էին, հայ գաղութից ներկայ էր միջակ դասակարգը»։

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ հաղորդում են, որ արտերը քաղված են արդէն և կալերը վերջանալու մօտ են։ Արդիւնքի կողմում հունձը անբաւարար եղաւ, որովհետև յունիսի սկզբների շոգերը և անձրևի պակասութիւնը թոյլ չը տուին հացաբոյսերին զարգանալ։ Ընդհակառակը ծմակ կողմում հացաբոյսերը այս ժամանակամիջոցը աջողութեամբ տարան և այնուհետև եկող յորդ անձրևների շնորհիւ առատ հունձ տուին։ Պարտէզները զուրկ են մրգեղէնից, գլխաւորապէս տանձից ու խնձորից, որ Ախալցխայի արտահանութեան գլխաւոր առարկաներն են կազմում։ Եղանակը շատ նպաստաւոր է կալ անելու և սարերում խոտ քաղելու, որ արդէն սկսված է։ Խոտը շատ առատ է։

—

ԲԷՇԻՇՔԵԱՆԴ գիւղից (Ալէքսանդ. գաւառ) մեզ գրում են. «Եղեամը (ղռավը) դարձեալ երեւաց մեզանում սպանիչ ոյժով։ Մօտ հինգ տարի էր, որ խեղճ գիւղացին եղեամի երեսը չէր տեսել և տաք սրտով կպած իր մայր հողին՝ գործում էր անդադար, իսկ այսօր թուլացել է և վախենում է (ոչ այս տարվայ ցրտից) գալ տարիների ցրտից, որովհետև եղել են տարիներ, որ յաջորդաբար ցրտահար են եղել այս կողմի ցանքսերը։ Առ այժմ առատութիւն է»։

—

ԲԷՇԻՇՔԵԱՆԴ գիւղից մեզ գրում են. «Խօլերայի մասին մեզանում ևս կարգադրութիւն արվեց։ Գաւառապետ պ. Պավլօվ, այցելելով մեր շինական դատարան ժողովրդին պատուիրեց, որ առողջապահիկ միջոցներ ձեռք առնեն գալոց վտանգի դէմ որ է ժողովրդից ընտրեց առանձին մարդիկ յատուկ գիւղերը մաքուր պահելու համար։

—

ԴՈՒԲՕՎԿԱ գիւղից (Կարսի գաւառ) մեզ գրում են. «Այստեղ արդէն խոտի և գարու քաղը վերջացել է սկսում են ցորենը քաղել, բայց այս տարի շատ առատ արդիւնք էր խոստանում շնորհիւ գարնան տուած անձրևներին. իսկ ինչ արած, որ անգութ մուկը մեծ հարուած է տալիս արտերին. սարսափելի կտրում է. լսվում է բոլոր այս կողմի ժողովրդի բերանից այդ անիծածի տուած վնասի գանգատը և երկիւղից ժողովուրդը դեռ լաւ չը հասած արտերը քաղում են. և մի կողմից էլ մրսելուց են վախենում. քանի որ այս տարի մեզանում եղանակները ցուրտ և քամիներով է անցկենում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Եապօնիան և Ռուսաստանը մեծ սխալ գործեցին։ Այսպիսի եզրակացութեան է գալիս մարդ, կարդալով այն խօսակցութիւնը, որ «Temps» լրագրի թղթակիցը ունեցել է Պետերբուրգի նախկին եապօնական դեսպան Կուրինօյի հետ։ Եապօնական դիպլօմատը ամենից առաջ հաստատել է, թէ նա, իր կողմից, արաւ ինչ որ հնարաւոր էր, որպէս զի պատերազմ չը ծագէ։ Միկադօն—յայտնեց նա—շատ խաղաղասիրաբար էր տրամադրված. նա աջակցում էր բոլոր իմ ջանքերին՝ լուծել Ռուսաստանի հետ ունեցած թիւրիմացութիւնները, առանց սուրը հանելու պատեանից։ Նախկին դեսպանի խօսքով, թէ ինքն և թէ մարկիզ Իտօն ամենևին լաւատես չէին. պատերազմը սաստիկ անհանգստութիւն է պատճառում նրանց։ Մենք կատարելապէս հասկանում ենք, թէ Եապօնիան ինչ ահագին դժուարութիւնների հետ գործ պէտք է ունենայ, եթէ պատերազմը երկարաձգվէ, իսկ հաւատալ, թէ Արևելքում բորբոքված ընդհարումը շուտով կարող է վերջանալ, դա կը լինէր մեծ օպտիմիզմ։ Երկու հակառակորդներն ևս սխալվեցին միմեանց վերաբերմամբ. երկուսն ևս հաւատում էին շատ մօտաւոր յաղթութեան, երկուսն ևս ափսոսում են, որ գործը հասաւ զինուորված ընդհարման, երկուսն ևս երկիւղ են կրում, որ երկար կուից յետոյ, որից նրանք դուրս կը գան թուլացած, նրանք կենթարկվեն որ և է մի երրորդ պետութեան ճնշման, որը միայնակ և օգուտ կը քաղէ ներկայ պատերազմի պտուղներից։ «Ահ, եթէ միայն Ռուսաստանը իմանար, թէ իսկապէս ինչ է Եապօնիան»—մի քանի անգամ կրկնեց խօսակցութեան ժամանակ Կուրինօն։ Ներկայ պատերազմից մի քանի օր առաջ եապօնական մի քանի դիպլօմատներ գրաւվել էին մի համարձակ ծրագրով—դաշնակցութիւն կապել Ռուսաստանի հետ և բաժանել նրա և Եապօնիայի մէջ ամբողջ ազդեցութիւնը Հեռաւոր Արևելքի վրա։ Սակայն Ռուսաստանը, ինչպէս հաստատում է Կուրինօն, շատ արհամարհական կերպով վերաբերվեց Եապօնիայի զինուորական ոյժերին և Եապօնիայի բոլոր առաջարկութիւններին պատասխանեց անտարբեր և սառն կերպով։ Այդ հանգամանքից և օգտվեց անգլիական դիպլօմատիան, որը, իր սովորական ճարպիկութեամբ դաշն կապեց Եապօնիայի հետ։ Հնարաւոր է, որ այդ դաշնակցութիւնը եղաւ մինը այն հզօր գործօններից, որոնք մղեցին Եապօնիային դէպի պատերազմ։ (Нов.)

Օգոստոսի 11 և 13-ի ճակատամարտի մասին։ Բեռլինից հեռագրում են, թէ լրագիրները օգոստոսի 14-ին, առաւօտեան հրատարակեցին հետևեալ տեղեկութիւնները. «Երեք օր առաջ սկսվեց տաք կռիւ. գեներալ Կուրօկիի երեք դիվիզիաները արշաւեցին արևելեան թևի վրա, բայց յետ մղվեցին ռուսներից և 32 եապօնական թնդանօթներ փչացան։ Ռուսական արտիլէրիան նշանաւոր կերպով գերազանցում է եապօնականից։ Խայչենի մօտ եապօնացիները կառուցել են մի շարք ամրութիւններ ընդարձակ տարածութեան վրա։ Կուրօկիի բանակը ձեռնարկել է արշաւման։ Երէկ ամբողջ օրը զարհուրելի կռիւ տեղի ունեցաւ Տաչանից հարաւ, ինչպէս և Լանդանսիանի մօտ, ուր ռուսները եապօնական 24 թնդանօթներ ստիպեցին լռել։ Եապօնացիները յամառաբար հարուածում են Անպինը (արդէն գրաւել են)։ (Бирж. Вѣд.)

Ռուսները նպաստաւոր դիրք են ստեղծել։ Լօնդօնից հեռագրում են, թէ Րէյտէրի գործակալութեան թղթակիցը հեռագրում է Լեաօեանից, որ նա հնարաւորութիւն է ունեցել նայել ռուսաց գլխաւոր դիրքերը։ Նրա խօսքով, աւելի քան հաւանական է, որ մի ամսից յետոյ պատերազմական գործողութիւնների նախաձեռնութիւնը կանցնէ ռուսների ձեռքը։ Անձրևների և հանգստութեան շրջանը մեծ ծառայութիւն մատուցեց ռուսաց զօրքերին, որոնք կարողացան հանգստանալ և կատարելագործել խուզարկուական ծառայութիւնը։ (Б. Вѣд.)

Եապօնիան ցանկանում է տեսնել միջնոր-

որոնց մի օր պէտք է որդեգրէր, ընդլայնէր և խորացնէր երաժշտական ամենամեծ հանճարներից մէկը, Ռիչար Վագնէր։ Դիտրօն էր նոյնպէս, որ իր շուրջը հաւաքելով Հօլբախի, Հէլվէտիուսի, Կօնտէյեակի, դ'Ալամբէրի նման բարեացակամ տաղանդները, ձեռնարկեց մի այնպիսի հսկայական գործի, որպիսին է Անսիկլօպէդին, այսինքն մարդկային մտքի այլ և այլ ճիւղերը, փիլիսօփայութիւնը, գիտութիւնը, գրականութիւնը ժողովրդականացնելու անօրինակ փորձին։

Մօրիս Լըբլօն՝ Ֆրանսիայի գրական երիտասարդութիւնը հրաւիրում էր ահա՝ այդ փառայեղ աւանդութեան վերադառնալ, գրականութիւնը, գեղարուեստը չը նկատել իբրև զուարճութեան, եսասէր, սահմանափակ հաճոյքների մի միջոց, այլ ժողովրդի գիտակցութիւնը լուսաւորելու, զարգացնելու մի մոգական գործի։

XVIII-րդ դարու աւանդութեան մի կերպ շարունակութիւնն էր Օգիւստ Կօնտի պօզիտիվիզմը, որ անսահման իդէօլօգութեան, աննպատակ բնազանցութեան ու անվերջ հայեցողութեան (spéculation) ամլութիւնն էր հռչակում, փաստաբանելով ի նպաստ գիտութեան, ժողովրդի կուլտուրական քաղաքակրթական առաջադիմութեան։

Լըբլօնի և նատիւրիստների համակրութիւնը հակվում էր դէպի Զօլայի դպրոցը, որովհետև այս վերջինը գրականութեան մէջ համապատասխանում էր պօզիտիվիստ և մատերիալիստ փիլիսօփայական աշխարհայեցողութիւններին։ Եւ Զօլայի ուղղութիւնը, եթէ գեղարուեստի տեսակէտով ներկայացնում էր թերութիւններ, գոնէ նա սիմբօլիստ և դէկադան գրականութեան ընդհանուր մակարդակից շատ բարձր էր իր հասարակական կոչումով։

Ահա թէ ինչ էր L'Essai sur le Naturisme-ը։ Մի քանի ամիս յետոյ, Մօրիս Լըբլօն հրատարակում էր մի ուսումնասիրութիւն՝ Էմիլ Զօլա երիտասարդների առաջ տիտղոսով, ուր հեղինակի քննադատական ձիրքերը աւելի ուժեղ ու խորապէս արտայայտվեցին։ Էմիլ Զօլա կարդալով այդ գործը՝ չէր վարանել յայտարարելու, որ իր մասին դրանից լաւագոյն աշխատութիւն չէր երևացել բնաւ։ Ժօրժ Ռօդէնբախ, բելգիացի նշանաւոր բանաստեղծ Մօրիս Մէտէրլինկի, ոչ նուազ նշանաւոր ու ողբացեալ հայրենակիցը, Լըբլօնի այդ ուսումնասիրութեան առիթով գրում էր հետևեալ ներբողական բնորոշ խօսքերը. «Լըբլօնի մեկնութիւնները՝ քննադատութիւնից աւելի մի բան են, դրանք ինքները գեղարուեստական երկեր են։»

Այդ մի և նոյն ժամանակ Լըբլօն՝ Լա Պլիւմ երիտասարդ հանդէսում ձեռնարկել էր մարտական յօդուածների մի շարք La Parade Littéraire—Գրական Ցուցամոլութիւն—ընդհանուր վերնագրի տակ։ Այդ յօդուածները՝ միշտ կրակոտ, հեգնական, կծու, գրական շրջանակներում յարուցանում էին զայրոյթի, ատելութեան, ինչպէս և խանդավառութեան և խանդաղատանքի փոթորիկներ։ Կեղծ փառքերի և գողացված հռչակների նկատմամբ անողոք, երիտասարդ քննադատը երևան հանում, լոյսի մէջ էր դնում մի շարք նոր բանաստեղծներ և գրողներ, որոնք առանց համբաւի, բայց ոչ առանց տաղանդի սպասում էին խրախուսող խօսքերի որպէս զի ցոյց տան, արժեցնեն իրանց ստեղծագործող ուժն ու արուեստագէտի թանգագին կարողութիւնները։

Մօրիս Լըբլօն այդ միջոցում թեակոխած լինելով իր քսան տարեկան հասակը, հարկադրվեց դադարեցնել իր գրական գործունէութիւնը ու մտաւ զինուորական ծառայութեան մէջ։ Ամիսներով Պարիզից բացակայելուց յետոյ, նորից վերադարձաւ իր գրական աշխատութիւններին ու հոգով, մարմնով ամբողջապէս նուիրվեց նատիւրիստ առաքելութեան։ Նա ջանաց այդ շարժման տալ ոչ միայն գրական, այլ և փիլիսօփայական, հասարակական և բարոյական արտայայտութիւն։ Պարիզում, 1900 թւին տեղի ունեցող Երիտասարդութեան կօնգրէսի եռանդուն կազմակերպողներից մինը եղաւ։ Եւ յետոյ ինքն է, որ հիմնեց Le Collége d'Esthétique contemporain-ը, որը նատիւրիստների հասարակական գործունէութեան ամենագլխաւոր փակտն էր։ Մօրիս Լըբլօն մի խօսակցութեան ժամանակ ինձ հաւատում էր, որ ձեռնարկել է մի քանի կարևոր աշխատութիւնների, ինչպէս Les Origines de l'art contemporain և Les Etapes de d'Esprit Français գործեր, որոնք դատելով նոյն իսկ իրանց պարզ վերնագրից խոստանում են լինել շատ հետաքրքրական։

Մօրիս Լըբլօն աշխատակցում էր գլխաւորաբար «L'Aurore» առաւօտեայ և «La Presse» երեկոյեան օրաթերթերին, ուր գրած ունի գրական այլ և այլ յօդուածներ։

Նատիւրիզմի մասին Լըբլօն ուղարկեց ինձ յետագայ տողերը։

«Գրական ներկայ շարժումը բնորոշող գիծը, փղոսկրեայ աշտարակների լքումն է, գրագէտների, բանաստեղծների, արտիստների ձգտումը՝ մասնակցելու սօցիալական կեանքի, ամենօրեայ գոյութեան։ Ու հիանալի է այս երևոյթը։ Մտաւորական երիտասարդութեան ընտրված մասը ժողովրդի բարձրագոյն դաստիարակութեան է նուիրվում։ Նա մի այնպիսի լեզուով է խօսում ժողովրդին, որ այս վերջինը երբէք չէր լսել։ Նա ցանկանում է, որ ամէն բան, մինչև անգամ իր քանդակած կռած, կոփած քարերը դառնան մարդկութեան համար պերճախօս ու իմաստալից առածներ։

(Կը շարունակվի)

դուքիւն։ «Matin» լրագրի աշխատակիցը տեսակցութիւն ունեցաւ ճապօնական հռչակաւոր հրապարակախօս Կատաեամի հետ, որ ներկայումս գտնվում է Ամստերդամում։ Կատաեամը—խաղաղութեան կողմնակից է. նա, իր ասելով, բազմաթիւ կողմնակիցներ ունի։ «Մի քանի ժամանակից ի վեր—ասաց նա ֆրանսիական ժուռնալիստին—անկեղծ ցանկութիւն է երևում, որ պատերազմը դադարէ և այդ ցանկութիւնը աւելի և աւելի լայն ծաւալ է ստանում։ Ի հարկէ, խաղաղութեան քարոզը սկսվեց ժուռնալիստների մէջ, բայց այդտեղից նա սկսեց տարածվել և աւելի պակաս արմատական շրջանների մէջ։ Լրագիրներ, ամսագիրներ, բրօշիւրներ, որոնք բարձրաձայն խաղաղութիւն են պահանջում, աւելի և աւելի շատ են տարածվում, մինչ շօվինիստ մամուլը օրէցօր կորցնում է ընթերցողներին։ Որքան էլ ջերմ հայրենասիրութեամբ բորբոքված լինեն բանուորները, սակայն արիւնահեղ պատերազմը սկսում է յոգնեցնել նրանց, մանաւանդ որ նրանք հասկանում են, թէ որքան քիչ օգուտ է խոստանում իրանց, աշխատութեան ներկայացուցիչներին, այդ պատերազմը։ Ես կարող եմ հաստատօրէն ասել, որ Եապօնիայում կան շատ անձինք, որոնք անկեղծութեամբ ցանկանում են, որ Պորտ-Արտուրի առումից յետոյ վէճը լուծվի միջնորդութեամբ։ (Новости)

Եապօնացիները Պօրտ-Արտուրի առաջ։ «National Zeitung» լրագրի պատերազմական քննադատը գրում է, որ եապօնացիները մեծ տարակուսանքի մէջ կանգնած են պօրտ-արտուրեան ամրութիւնների առաջ։ Իբրև ամենից շատ ապահով դրութիւն նրանք բռնել են արևելեան կողմում, այն տարածութեան վրա, որ ընկնում է Դագուշանից մինչև Գայլի սարերի լեռնաշղթան։ Այդ գծի երկու կողմերի դիրքերը լրացնում են միմեանց և մեծ նշանակութիւն ունեն յարձակվողների համար։ Որովհետև արևելեան ճակատները ամենաուժեղն են համարվում, ուստի շտուրմը այդ կողմից հնարաւոր է միայն այն դէպքում, եթէ թնդանօթները Գայլի սարերից, կարելի է նաև նաւատորմի օգնութեամբ ծովի կողմից, գերազանցութիւն ստանան ռուսաց ամրոցների թնդանօթներից։ Գայլի սարերի և արտուրեան ամրութիւնների գօտու միջև դասաւորված են Շուցգինինը և Պալիջուինը—երկու կէտեր, որոնց տիրապետութեան համար դեռ չորս օր առաջ կատաղի կռիւ տեղի ունեցաւ։ Շույգհինինը, ըստ երևոյթին, անցել է եապօնացիներին, բայց Պալիջուինը դեռ գտնվում է ռուսաց ձեռքում. սակայն վերջին կէտը, որ գտնվում է հովտում, կարող է նշանակութիւն ունենալ միայն իբրև յենակէտ հետևակի համար։ Ռուսները դեռ բաւական ազատ տեղ ունեն բերդի հիւսիս-արևելեան մասում, ուր, հաւանօրէն, և տեղի է ունենում կռիւը վերջին օրերս։ Յամենայն դէպս, եապօնացիները դեռ մինչև այսօր չեն գրաւել մի կէտ, որ լինէր բանալի Պօրտ-Արտուրի համար։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամրակոծութեան առաջին փորձերը, որոնց եապօնացիները ձեռնարկեցին, երբ, ինչպէս պէտքն է, իրանց պաշարողական գործիքները տեղաւորեցին, չը կարողացին վրդովել գեներալ Ստեսսելին։ Գործերի իսկական դրութիւնը կախված է ամենից առաջ նրանից, թէ որքան աջող կերպով երկու կողմերը դասաւորել են իրանց արտիլերիան։ Եթէ—ինչ որ դժուար է ենթադրել—ռուսաց թնդանօթները տրված լինեն առանց հարկաւոր պաշտպանութեան, այն ժամանակ գերազանցութիւնը շուտով կանցնէր եապօնացիների կողմը։ Հակառակ դէպքում, եապօնացիները դեռ շատ ժամանակ պէտք է կորցնեն, նախքան որ նրանց կաջողվի մտնել բերդին վերջնական շտուրմի համար։ Նախատեսել թէ երբ կը հասնի այդ րօպէն, հնարաւոր չէ, որովհետև ներքին ամրութիւնների շինութիւնը բոլորովին անծանօթ է կողմնակի անձանց։ Եթէ ամրութիւնները համապատասխանում են ժամանակակից պատերազմական տեխնիկայի նորագոյն պահանջներին, ուրեմն եապօնացիները դեռ երկար պէտք է սպասեն։ Յամենայն դէպս արդէն այժմ պէտք է ընդունել, որ ռուսները ցոյց տուեցին իրանց կարողութիւնը՝ պաշտպանել բերդը և եապօնացիները, չը նայելով իրանց այնքան փառաբանված ռազմական գործունէութեան, շատ ծանր գործի պատահեցին (Бирж. Вѣд.)։

ԹԻՒՐՔ-ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

Թիւրք-ամէրիկական ընդհարումը, որը կատարելապէս կարգադրված էր համարվում, սպառնում է կրկին սուր բնաւորութիւն ընդունել, որովհետև Բ. Դուռը, ըստ սովորութեան, միջոցներ է որոնում խուսափելու իր հէնց նոր տուած խոստումները կատարելուց։ Ըստ երևոյթին, թիւրքաց դիպլօմատները վատ խաղ խաղացին Կ. Պօլսի ամէրիկական գործերի հաւատարմատար միստէր Լէյշմանի հետ։

Դիպլօմատիական բարդութիւնները Թիւրքիայի և Ամէրիկայի միջև սկսվել են դեռ այն ժամանակից, երբ Ֆրանսիան երկու տարի առաջ կանօնաւորեց իր յարաբերութիւնները դէպի Բ. Դուռը Մերձաւոր Արևելքում։ Օգուտ քաղելով րօպէից, Միացեալ-Նահանգների կառավարութիւնն ևս սկսեց աշխատել, որպէս զի Փոքր-Ասիայում բաւական մեծ թւով ցրված ամէրիկական միսիօնէրական դպրոցներին շընորհվի այն իրաւունքները և արտօնութիւնները, որ ունեն եւրօպական մի քանի պետութիւնների հիմնարկութիւնները։

Երկու տարի ձգձգվում էին բանակցութիւնները, որ և է հետևանքի չը հասնելով։ Վերջապէս, միստըր Լէյշման պաշտօնական խոստում ստացաւ, որ նրա պահանջները կը կատարվեն։ Սակայն անցնում էին օրեր և շաբաթներ, և միստէր Լէյշման իզուր սպասում էր Թիւրքաց կառավարութիւնից վերջինիս տուած խոստումների իրագործումը։

Հէնց այդ ժամանակ Վաշինգտօնի կաբինէտը հրաման արձակեց ծովապետ Ջէուի էսկադրային գնալ Զմիւռնիա։ Այդ սպառնալիքի երկիւղից Բ. Դուռը վերսկսեց իր բանակցութիւնները ամէրիկական լիազօրի հետ, և այս անգամ միստէր Լէյշմանին տրվեցին ամենահանգստացուցիչ հաւաստիացումներ «խօսքերով»։

Ամէրիկական միսիան Կ. Պօլսում դեսպանութեան աստիճանին բարձրացնելու, և ամէրիկական հպատակին Զմիւռնիայում, որի շահերին վնաս էր հասցրված, վարձատրելու հարցերը,—թողված են «առ այժմ» մի կողմը։

Բանակցութիւնները կենտրօնացան բացառապէս դպրոցների հարցի վրա։ Մ-ր Լէյշման, դառն փորձից խրատված, գրաւոր երաշխաւորութիւններ պահանջեց։ Այն ժամանակ նըրան գրաւոր հաւաստիացում ևս տրվեց այն բանի մասին, որ ամէրիկական դպրոցները «կը ճանաչվեն» ինքնուրոյն, և որ «ճանաչելու մասին հրովարտակները» կուղարկվեն նրանց, հէնց որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բոլոր ձևականութիւնները կը կատարէ։

Մ-ր Լէյշման դիմեց Բ. Դրան այդ գրաւոր խոստումի սանկցիայի համար, բայց այդտեղ նրան սպասում էր մի անախորժ սիւրպրիզ։

Նրան մերժեցին վաւերացնելու գրաւոր խոստումը։ Զուր տեղը Լէյշմանը յիշեցնում էր այն հաւաստիացումների մասին, որ բարձրաստիճան անձինք արել էին։ Բ. Դուռը կտրական կերպով յայտնեց, որ նա ոչ ոքի լիազօրութիւններ չէ տուած եղել այդպիսի հաւաստիացումներ անելու համար։

Ակներև է, որ թուրքերի համար կարևոր էր ժամանակ որսալ և նրանք հասան իրանց նըպատակին։

Հարցը մնում է առաջվայ պէս բաց և Միացեալ-Նահանգները, անկասկած, չեն դանդաղի նորից բռնել սպառնողական դիրք։

Սակայն Կ. Պօլսում տիրող ընդհանուր կարծիքն այն է, որ թիւրքական կառավարութիւնը երբէք չի համաձայնի բաւարարութիւն տալ ամէրիկական պահանջներին։ Ամէրիկական դպրոցների աշակերտների մեծ մասը հայեր են, իսկ Բ. Դուռը ամենևին ցանկութիւն չունի հրաժարվել ամեն մի վերահսկողութիւնից ազգաբնակութեան այդ մասի կրթութեան վրա։ (Р. С.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ֆրանսիական դէպարտամէնտների (նահանգ) նահանգական գլխաւոր խորհուրդները (էտաժէնէրօ) ժողովներ են անում զանազան հարցերի համար։ Այդ ժողովներում նրանք տալիս են իրանց վստահութեան և համակրութեան քուէն երկրի ներկայ կառավարութեանը։ Ամեն կողմից կառավարութիւնն ստանում է շնորհաւորական ուղերձներ, որոնց մէջ, բացի ընդհանուր արմատական հակակղերական ուղղութեան խնդիրներից, պարզապէս յիշված է, որ ազգը ցանկանում է շուտով տեսնել կօնկօրդատի վերացումը և եկեղեցու բաժանումը պետութիւնից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

19 օգոստոսի

ԼՕՆԴՕՆ։ Վաշինգտօնից հաղորդում են, որ եապօնական կառավարութեան կողմից Սէուլում արտաքին գործերի մինիստրութեան խորհրդական նշանակված Ստէվէնս, ծագումով ամէրիկացի, վաղուց արդէն գտնվում է եապօնական ծառայութեան մէջ։ Եապօնական կառավարութիւնը յայտարարում է, որ Ստէվէնսի նշանակումը չէ խախտում Կօրէայի անկախութիւնը։

ՊԵՏՐՕՊԱՎԼՕՎՍԿ։ Անցաւ առաջին գնացքը գերի եապօնացիներով. նրանք 500 հոգի են։

ԼՕՆԴՕՆ։ Արտաքին գործերի մինիստրութիւնը հաղորդում է, որ Պետերբուրգի մեծ բրիտանական դեսպանը հերքում է այն լուրը, որ ռուսաց կառավարութիւնը վարձատրութիւն է տուել գերմանական «Տէա» շոգենաւը ջրասոյզ անելու համար։

ԲԵՐԼԻՆ։ Լօնդօնից հաղորդում են հեռագրով Լեաօեանից օգոստոսի 18-ից, որ կռիւը շարունակվում է։ Եապօնական թարմ զօրքեր մօտենում են անընդհատ։ Եապօնացիները սպառնում են ռուսական դիրքերին Լեաօեանից դէպի արևմուտք։

ՉԻՖՈՒ. (Րէյտէր)։ Հէնց նոր եկաւ մի չինացի, որը դուրս է եկել Պօրտ-Արտուրից օգոստոսի 16-ին երեկոյեան։ Նա հաղորդում է, որ օգոստոսի 14-ին տաք կռիւ էր։ Եապօնացիները, յարձակում գործելով Սօյշինից, աշխատում էին տիրել Պալիջուանը և երկու անգամ գրոհ տուին առաւօտեան 4 և 8 ժամերի միջև, բայց երկու անգամն ևս յետ մղվեցին։ Եապօնացիների կորուստները հասնում են 1045 մարդու։ Ապա Սօյշինի վրա զետեղված եապօնական բատարէաները մի ժամվայ ընթացքում քաղաքը ռումբերով ծածկեցին։ Չինացին աւելացնում է, որ մինչև իր դուրս գալը եապօնացիները չէին պատրաստվում նոր շտուրմ անել Պալիջուանի վրա և հաստատում է, որ ռուսները նորից գրաւեցին Իտշան։ Օգոստոսի 15-ին եապօնացիները յարձակում գործեցին № 6 մարտկոցի վրա։ Այդ մարտկոցը կատարելապէս նոր է և լաւ է պաշտպանված։ Երեք ժամ տևող խիստ կռւից յետոյ, որի ժամանակ եապօնացիները ենթարկվեցին № 2 մարտկոցի խաչաձև կրակին, նրանց աջողվեց տիրել № 6 մարտկոցին, որի բերդապահ զօրքը հեռացաւ։ Մի քանի ուրիշ մարտկոցներ այն ժամանակ կենտրօնացրին կրակը № 6 մարտկոցի վրա և ստիպեցին եապօնացիներին մաքրել նրան։

ՍՏԱՒՐՕՊՕԼ։ Քաղաքային դուման, հաւատարիմ հպատակութեան շնորհաւորութիւններ մատուցանելով Նորա Մեծութիւններին Թագաժառանգի ծննդեան առիթով, որոշեց բանալ նոր տարրական դպրոց, ներել չքաւորագոյն բնակիչներին 20,000 ր. պարտիկներ, հիմնել 400 րուբլիանոց թոշակ իգական բժշկական ինստիտուտում։

ՄՕՍԿՎԱ։ Սարովի վանքը պատրաստականութիւն յայտնեց իր հոգածութեան տակ առնել 130 վիրաւորներին։ Լէպեօշկինայի կտակակատարները 500,000 ր. մտցրին քաղաքային դրամարկղը հանգուցեալի հիմնած պրօֆեսիօնալ իգական դպրոցի պահպանութեան համար։

ԲԵՐԼԻՆ։ Լրագիրների խօսքով, Կօբուրգեան Լուիզա պրինցուհին յանկարծ անհետացաւ Էլստէր կուրօրտից։ Երևի նրան տարել է պօրուչիկ Մատաշիչ, որի հետ նա առաջ մտերիմ յարաբերութիւններ ունէր։

20 օգոստոսի

ՏՕԿԻՕ։ Լեաօեանից ստացված զեկուցումների մէջ չէ յիշատակվում եապօնացիների վրա կորուստների մասին. կարծում են, որ կորուստները շատ մեծ պէտք է լինեն, քանի որ ահագին թւով զօրքեր էին մասնակցում կռւին և եապօնացիները յամառ յարձակումներ էին գործում զօրեղ ամրացրած դիրքերի դէմ։ Ռուսական ամրութիւնների երկրորդ գիծը աւելի զօրեղ է յայտնվում, քան Անշանշժանի մօտ։ Հաշւում են, որ Կուրօպատկինի մօտ գտնվում են 150 հազար մարդ ռազմական ոյժեր։ Հարաւից Լեաօեանը պաշտպանող ռուսների աջ թևը և կենտրօնը կէս օրից յետոյ յետ քաշվեցին դէպի Լեաօեան։ Կռիւը դեռ շարունակվում է Վէննուշան լեռան շուրջը։ Օգոստոսի 17-ին, հիանալի դիրքի վրա զետեղված ռուսական բատարէայի անվրէպ հարուածների շնորհիւ, եապօնական զօրասիւնը ստիպված էր շրջապատել Վէնսունշանեան բարձրութիւնների ամբողջ շղթան և շուռ գալ դէպի արևելք։ Վէնսունշանեան լեռը մեծ նշանակութիւն ունի, որովհետև տիրապետում է Լեաօեանեան դաշտավայրի հարաւային մասի վրա։ Լեաօեանում գտնվող չինացիները հաւատացած են, որ եապօնացիները յետ կը դառնան՝ Վէնսուշանեան բարձրունքները գրաւելու համար թէպէտ և դա մեծ զոհեր պահանջէր նրանցից։

ՄՈՒԿԴԷՆ (Րէյտէր)։ 10,000 մարդուց բաղկացած եապօնական զօրաբաժինը արշաւում է իբր թէ հիւսիս-արևելքից Մուկդէնի վրա։

ՖԻԼԻՊՊՕՊՕԼ։ (Ընդդիմադրական շրջաններից)։ Ուսկուբի վալին վերադառնալով Իպէկից, զեկուցեց Կ. Պօլիս այն աջող հետևանքների մասին, որ նա ձեռք է բերել Ալբանիայի խաղաղացման մասին։ Նրան աջողվել է բռնել աւազակներին և խաղաղացնել ալբանական ժողովուրդը, յետաձգելով հարկերի վճարումը։ Այնուամենայնիւ երկիւղ են կրում ապստամբութեան նորոգութեան մասին, որովհետև դատապարտվածների մեծ մասը, ներումն ստանալով ազատվել է։—Այն լուրը, թէ յունաց պատրիարքարանի և ռումինական կառավարութեան միջև կնքված է համաձայնութիւն կուցօվալախների խնդրի մասին, հնարովի է. ընդհակառակը, յունաց սինօդը հրաժարվում է որ և է համաձայնութիւնից, և արտաքսել է եկեղեցուց երկու յոյն քահանաներ Մօնաստիրում նրա համար, որ նրանք հոգեհանգիստ են կատարել երկու կուցօվալախների համար. բացի դրանից սինօդը որոշել է տեղեկացնել Բիտօլի միտրօպօլիտին որ նա արտաքսէ եկեղեցուց ամեն մի քրիստոնեայի, որը հաղորդակցութեան մէջ կը մտնէ յիշեալ քահանաների հետ և այդ մի և նոյնն է, թէ ամբողջ կուցօվալախեան համայնքը արտաքսված է եկեղեցուց։

ՕՐԵՆԲՈՒՐԳ։ Դուման միաձայն որոշեց Թագաժառանգի ծննդեան յաւերժացման համար արկանել առ ոտս Նորա Մեծութիւնների ամենահպատակային զգացումները, բանալ արական դպրոց Թագաժառանգի անունով, վերացնել վճարը քաղաքային տարրական դըպրոցներում և ջնջել ամենաաղքատ քաղաքացիների պարտիկներից 6500 րուբլի։

ՍՈՒՐԱԺ։ Պօպօվօզօրօվեան, Զաքարեան և Կօտանօվեան վօլօստների գիւղացիները և կօզակները Թագաժառանգ Ցեսարեվիչի ծննդեան առիթով շինական ժողովներում որոշեցին արկանել առ ոտս Թագաւոր Կայսրի ամենահպատակային զգացումները խնդրել հաճութիւն՝ սեփականացնել Զաքարեան մանկական ապաստարանին «Ցեսարեվիչ Ալէքսէյի ապաստարան» անունը և ապաստարանի պահպանութեան համար սահմանել տուրք՝ մի կօպէկ դեսեատինից, որ ամեն տարի մօտ 680 րուբլի կանի։

ՖԻԼԻՊՊՕՊՕԼ (Ընդդիմադիր շրջաններից)։ Կիսապաշտօնական «Новый Вѣкъ.» լրագիրը հաղորդում է, որ բուլղարական կառավարութիւնը մտադիր է փոխառութիւն անել՝ ծածկելու համար արտակարգ ծախքերը, ի նկատի ունենալով գործերի այժմեան վիճակը և շինելու համար բալկանեան երկաթուղու մի նոր գիծ, բայց որովհետև այդ փոխառութիւնը անյետաձգելի անհրաժեշտութիւն չէ հանդիսանում, ուստի կառավարութիւնը չը պէտք է շտապէ, այլ սպասէ յարմար առիթի։

20 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաժառանգ Ցեսարեվիչը նշանակված է բելօմորեան հետևակ 89-րդ գնդի մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Օգոստոսի 18-ին (Րէյտէր)։ Պաշտօնական զեկուցումները Տօկիօից նկարագրում են կռիւը Լեաօեանի մօտ։ Կուրօկիի բանակը անցաւ օգոստոսի 16-ին Տայցխէն գիշերով, գրաւելով բարձրութիւնը Զժուանխօձիից դէպի արևելք, չորս մղոն հեռու Լեաօեանից դէպի հիւսիս-արևելք։ Միաժամանակ Կուրօկիի ձախ թևը յարձակվեց ռուսների վրա, որոնք գրաւել էին Տասյունլինեան լեռնանցքը, սակայն եապօնացիները աջողութիւն չունեցան։ Այդ ժամանակ Օկուի արևմտեան բանակը բռնել էր Վէնսուլանի բարձունքը, Լեաօեանից 5 մղոն դէպի հարաւ-արևմուտք։ Եապօնական կենտրօնը մասնակցում էր արշաւման արևմտեան և արևելեան բանակների հետ։ Օգոստոսի 17-ին բոլոր երեք բանակները շարունակեցին յարձակումը։ Ռուսները պաշտպանվում էին սաստիկ եռանդով։ Եապօնական արևմտեան բանակը պէտք է նահանջէր Վէնսուշանի բարձունքից Սինլուտինի բարձունքի վրա, Լեաօեանից դէպի հարաւ։ Օգոստոսի 17-ին, կէս գիշերը եապօնացիները գործեցին գլխաւոր յարձակումը և ռուսներին ծանր կորուստ պատճառեցին։

ՏՕԿԻՕ, 19 օգոստոսի (Րէյտէր)։ Կուրօպատկինը կենտրօնացրել էր բոլոր ոյժերը Լեաօեանում և ցոյց տուեց ամենայամառ դիմադրութիւն։ Վերջին օրերի ընթացքում Օյեաման մի քանի անգամ բաց թողեց եապօնական միացեալ բանակը ռուսների վրա, որոնք գրաւում էին լեռնային շղթաների վրա սքանչելի ամրացրած դիրքեր: Վերջապէս եապօնացիներին աջողվեց ստիպել ձախ թեւը նահանջելու. սակայն նրանք երկար ժամանակ աջողութիւն չունէին աջ թեւի վրա, ուր ռուսները յետ մղեցին բազմաթիւ յարձակումները: Օգոստոսի 19-ին, արեւածագին, ձախ թեւը դիմեց կատաղի յարձակման, որը աջողվեց: Օյեաման յայտնում է, որ նրա կորուստները Լեաօեանի յարձակումների ժամանակ նշանաւոր են: Կուրօկիի բանակի կորուստները օգոստոսի 11-ից մինչև 15-ը հասնում են 2255 հոգու: —Ընդհանուրի կարծիքով, Պորտ-Արտուրի անկումը սեպտեմբերի վերջից առաջ չի լինի:

ՏՕԿԻՕ, օգոստոսի 18-ին (Րէյտեր): Չինական կառավարութիւնը շարունակում է շատացնել զինուորական ույժերը Լեաօի չէզօք ափի վրա: Մա գեներալ ստացել է հրաման ազդուաբար պնդել չէզօքութեան իրաւունքների և պարտաւորութիւնների վրա:—Եապօնիայի կառավարական օրգանները նախազգուշացնում են ժողովրդին, որ կառավարութիւնը չէ սպասում հաշտութիւն շուտով կնքման և առաջարկում է ժողովրդին պատրաստ լինել նոյն իսկ այժմ տևողական և դժուար պատերազմի համար:

ՇԱՆԽԱՅ, 19 օգոստոսի (Րէյտէր): «Րիւրիկ» նաւի քահանան, որ եկել է այստեղ, ասում է, թէ երբ բոլոր օֆիցէրները դուրս հանվեցին կազմից, մի երիտասարդ օֆիցէր, Իվանօվ, ընդունեց նաւի հրամանատարութիւնը և փորձեց ուղղել կայմային մեքենան, բայց, աջողութիւն չունենալով, կամեցաւ պայթեցնել կրէյսէրը, սակայն այդ նրան չաջողվեց, որովհետև ականները ոչնչացրված էին. այն ժամանակ նա բացեց լուսատուները (իլլիւմինատօրները): Վիրաւորներին ցրեցին խցանափայտի ներքնակների վրա և ձգեցին ծովը. նրանց հետևեց և մնացած կոմանդան:—Եապօնական ականանաւը մտաւ նաւահանգիստ. ենթադրում են, որ նա հեռագիրներ կը տանէ նաւատօրմի համար:

ՏԵԱՆՋԻՆ, 19 օգոստոսի (Րէյտէր): Պորտ-Արտուրից եկած լուրերին նայելով, եապօնական մի զօրախումբ փորձեց ափ իջնել Լեաօտեշանեան փարոսի մօտ, իսկ քաղաքի հիւսիսում գտնվող եապօնական ույժերը ուղղվեցին դէպի նոյն կէտը, Աղաւնու ծոցի երկարութեամբ. պաշարումը այդ պատճառով աւելի նեղանում է: Եապօնացիների կորուստները Լեաօտեշանի մօտ նշանաւոր են:

ՉԻՖՈՒ (Րէյտէր): Հարտը ենթադրում է, որ «Ինդեպանդանտ» նաւին պէտք կը լինի թոյլ տալ դուրս գալ Նիւչուանից: Եապօնական մի կրէյսէր և երկու հակաականանաւ տեսնվում են նաւահանգստի մօտ:

ՉԻՖՈՒ: Օգոստոսի 18-ին սաստիկ թնդանօթաձգութիւն էր լսվում Պորտ-Արտուրի մօտ:

ԼՈՆԴՈՆ: Օգոստոսի 19-ին, Պարիզի բօրսայում տարածվեցին լուրեր Էդուարդ թագաւորի առողջութեան անբաւարար դրութեան մասին: Թագաւորի գլխաւոր-բժիշկը Մարիենբադում յայտնում է, որ թագաւորը բոլորովին առողջ է: Ինքը թագաւորը յայտնեց, որ երբէք իրան այդքան լաւ չէ զգացել:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուկիա, վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային:
Մ. Գ. ԱՐԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներական և վիրաբուժական:
Հ. Ի. ԲԱՂԱՆՕՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.
Գ. Ի. ԳՋԷԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. Սօլօզով ատամնաբոյժ. 9—11 ժ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. ՌՈՍՏՈՄԲԷԿՈՎ—5—6 ժ. վիրաբոյժ. մորթու և վեներական հ.
Գ. Օ. ԼԵՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), ներքին և վեներական հ.
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ՇԵՐԲԻՆԻՆԱ—7—7½ ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Ա. ԱՌՎԱՆԻՑԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ:

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի. ԳՋԷԼԻԵՎ

ԲԺՇԿԱՊԵՏ

Գր. Տէր-Գրիգորեանց

ընդունում է հիւանդներին—ներքին (մասնաւորապէս կրծքի) և երեխայոց հիւանդութիւններ. ունի ռէնտգէնեան կաբինէտ. 154. Միքայէլեան պրօսպէկտ, տէլէֆօն 825.
(շ. ե. հ. չ.) 76—105

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելիամինօվսկայա փողոց № 8: (ե.ո.) 14—100

ՎԻԵՆՆԱ. ԲԺ. Պ. Մ. ԱՖՐԻԿԵԱՆ

Կազմում է խորհուրդներ տեղիս մասնագէտ-պրօֆէսօրների հետ Ռուսաստանից եկող հիւանդների համար:

D-r med. P. Afrikian.
Հասցէն Wien, I, Tegetthoffstrasse, 1 Pension.
47—50

Ներսիսեան Դպրոցի

վարչութիւնը յայտարարում է, որ աշակերտների վերաքննութիւնները կը սկսվեն օգոստոսի 30-ին, իսկ նորեկների քննութիւնները սեպտեմբերի 1-ին: Նորեկների խնդիրները (ծննդեան և ծաղկի վկայականներով) ընդունվում են դպրոցում օգոստոսի 20-ից մինչև 31-ը, առաւօտեան 8—12 ժամերին, բացի կիրակի օրերից: Այս տարի առաջին պատրաստականում (անգրագէտների դասարանում) ընդունելութիւն չը կայ:

Պաշտօնակատար տեսչի
Ստ. Մալխասեանց

Լոյս տեսան և վաճառվում են
Լեւոն Բաբայեանի
թարգմանութեամբ (գերմաներէնից) հետևեալ աշխատութիւնները

1. Մ. Հալբէի—ՍԻՍՏԵՄ և Օ. Վիլդէի—ԵՐՋԱՆԻԿ ԻՇԽԱՆԸ գինն է 15 կոպէկ: 2. Մ. Նորդաու—ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԻՏԱԼԱՑԻՆ գինն է 10 կ.: 3) Իւհանեի Ահօի—ԵՐԿՈՒ ՆՈՎԵԼԼԱ
Գինն է 10 կ.

Դիմել «Գուտտէնբէրգ» գրախանութին:
(կ. ե. հ. ո.) 4—5

Լոյս տեսաւ
ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԲԱՅԵԱՆԻ

,,ՎԱՂԱԺԱՄ ՄԱՀ"

ողբերգութիւն՝ հինգ արարուածով:
Գինն է 1 րուբլի:

Դիմել հայ գրավաճառներին և հեղինակին՝ (օգոստոսից յետոյ) հետևեալ հասցէով. Екатеринодаръ (Куб. обл.) учителю Екатеринодарскаго арм. 2-хъ клас. училища, Хачатуру Бабаянцу. (ո. ե.) 2—5

ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳՐԵՐ

Աշակերտաց համար

		Ր.	Կ	
1.	Դասատետր կրօնի I տարի	—	25	25% զ.
2.	» » II »	—	20	20% զեղչ
3.	» » III »	—	30	
4.	Հին-ուխտ (ընդարձակ) .	—	45	
5.	» (համառօտ) .	—	35	
6.	Նոր-ուխտ . . .	—	40	
7.	Գործք առաքելոց . .	—	40	

Ուսուցչաց համար

		Ր.	Կ	
8.	Ուղեցոյց (մեթօդիկայ) հին-ուխտի . . .	1	75	35% զեղչ
9.	Ուղեցոյց (մեթօդիկայ) նոր-ուխտի . . .	2	5	
10.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. . .	1	50	
11.	Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե. . .	—	50	

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».

—

Դասագրքերի պահեստը ամառ գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева мануфактурный магазинъ А. Амирагова).

Ցանկացողները նրանից էլ կարող են պահանջ անել:

Սահակ քահ. Սահակեանց
յ. ա. օ. յլ.—օ. օր-մէջ ա. ա. օ. 43—66

ՄԱՍՆԱՒՈՐ ԴՊՐՈՑ
ԵՒ
Մանկական Պարտէզ

Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
(Ծննդ. Յովհանջանեան)

Բեբուտովսկայա փողոց, տուն Շադինեանի № 38.
Երկու սեռի մանուկների ընդունելութիւնը օգոստոսի 20-ից, ուսումը սեպտեմբերի 1-ից: (21,22,26,28,29,1,3,6,7,9) 1—10

Լոյս տեսաւ

«ՇՔԵՂ» գեղարուեստական ալբօմի Դ. պրակը, բաղկացած ազգային հին յիշատակարանների 13 կտոր նկարներից, մեծ մասամբ Անիի աւերակներից: «ՇՔԵՂ»-ի Ա. և Բ. պրակները բոլորովին սպառված են, Գ. պրակից մնում են միայն մի քանի օրինակներ:

Գների վրա կարևոր զեղչ.

ա—«Շքեղ»-ի Դ. պրակը, հատը .	1 ր. 20 կ.
բ—Բացնամակն. ազգային հասարակ. դէմքերով, 85 տեսակ, 100-ը	2 » 50 »
Նոյնը 1000-ը	20 » —
գ—30×40 սմ. մեծութեամբ նկարներ (Հայրիկ, Սահակ, Մեսրոպ, Էջմիածին և 10 ուրիշ նկարներ ազգային գրագէտներից) հատը . .	— 20 »
դ—30×40 սմ. մեծ. գեղար. նկարներ, հ.	— 50 »
ե—18×24 սմ. » » » »	— 30 »

Դիմել Тифлисъ, фототипія Гнуни—Маримъ.

Խնդրում ենք մեր գործակալներից բարեհաճել հաղորդելու մեզ, թէ «Շքեղ»-ի Դ. պրակից քանի՞ օրինակ հարկաւոր է ուղարկել իրանց: (հ. շ.) 2—10

ԴԱՍԱԳՐՔԵՐ ԿՐՕՆԻ

Յատկապէս պատրաստած պետական դպրոցների համար, (Թոյլատրված հոգևոր և ուսումնարանական վարչութիւններից) աշխատասիրութիւն Եզնիկ աւագ քահ. Երզնկեանի:

I. Առաջին գրքոյկ, պատրաստական դասարանների համար «Գլխաւոր աղօթքները (իրանց բացատրութիւններով) և տօների համառօտ պատմութիւնները» 5-րդ տպ. գինն է 20 կոպէկ:

II. Երկրորդ գրքոյկ, «Հին-ուխտ» (30 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) 3-րդ տպ. գինն է 30 կոպէկ:

III. Երրորդ գրքոյկ, «Նոր-ուխտ» (32 դասերի վերածած, ուսուցչի կրօնական—բարոյական զրոյցներով հանդերձ) գինն է 30 կոպէկ:

Գրավաճառների, ուսուցիչների համար 30% զեղչում, առանց ճանապարհածախսի: Դիմել Тифлисъ, прот. Езнику Ерзинкянцъ կամ Тифлисъ, Центральный книжный магазинъ.
(ե. հ. շ.) 10—25

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ

(Պրօգիմնազիայի ծրագրով)
և Մանկական-պարտէզ
Ս. Վ. Արղութեան-Երկայնաբազուկի
Միքայէլեան փող., № 154:

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 15-ից: Պարապմունքներն սկսվում են սեպտեմբերի 1-ից: Երեխաները պատրաստվում են բոլոր միջնակարգ դպրոցների համար—մինչև V դասարան: (15, 21, 28) 2—3

ՎԱՌՎԱՌԷ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՍՄԲԱՏԵԱՆՑՆԵՐԻ

ուսումնարաններում աւանդվում են՝ կրօն (հայոց լեզուով), ռուսաց լեզու, թուաբանութիւն, հայոց լեզու և գեղագրութիւն և տարվայ ընթացքում պատրաստվում են քննութեան երեխաներ զանազան միջնակարգ դպրոցների և Լազարեան ճեմարանի համար:

Ուսումն սկսվում է օգոստոսի 10-ից: Ռոստով Դ/Վ, Տուրգենեվսկայա փողոց, տուն եղբ. Ունանօֆների, № 4. (ա.օ) 14—25

Պանսիօն եւ Ուսումնարան
ՎԻԼԼԻԱՄՍԻ

Ընդունվում են գիշերօթիկ և երթևեկ երեխաներ պետական կրթական հիմնարկութիւնների համար պատրաստելու. առանձնապէս՝—ֆրանսերէն և գերմաներէն լեզուներից:

Алексвндрополь, рядомъ съ городскимъ садомъ. (ե. հ. շ.) 6—10

Գուտտենբերգ

գրավաճառանոցում վաճառվում են.

«Փարօսի վրա», Յ. Սուրխաթեանի .	—	5
«Ֆաթի», պատկական պատմուածք, Ղազիբէգի, թարգմ. Ղ. Կ. . .	—	5
«Տէր-Մաթալ» և իր զոհերը, Խանսան.	—	35
«Մելքոն աղայի սթօռեան», վերջաբանով, Թուրխաթեանի . .	—	35
Х. А. Вермишевъ, Матеріалы для исторіи грузино-армянскихъ отношеній. Отвѣтъ на книжку кн. И. Г. Чавчавадзе: Армянскіе ученые и впіющія камни . . .	1	—
И. Г. Чавчавадзе, Армянскіе ученые и вопіющіе камни . . .	—	50

«Գուտտենբերգի» հրատարակութիւնները

«Պոմպէյի վերջին օրերը», Լորդ Վիտտօնի թարգմ. Միրզօյեանի . .	1	50
«Ասպետ», Վ. Փափազեանի . .	—	15
«Կեանքը ծովերի խորքում» Լունկեվիչի թարգմ. Ս. Մալխասեանի .	—	30
«Տրիլբի», դրամա 4 արար. թարգմ. Լ. Մէլիք-Աղամեանի . . .	—	20
«Եաղաստ», վոդ. 1 արար. 2 պատկեր, Յ. Ղազարեանի . . .	—	25
«Դարվինիզմ», Ս. Բալաղ. (Դար. պատ.)	—	50

Դիմել՝ Книжный магазинъ «Гуттенбергъ» Дворцовая, Г. Галустяну. 3—3

Լոյս տեսաւ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հատոր առաջին. 1865—1871.

ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ.

Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը: Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թւականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում:

Դիմել «Գուտտենբերգ» գրախանութը: 16—25

ԲԱԼԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Վօգզալնի փողոց, տուն Թիֆլիսի առևտրական բանկի

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

1) Երկաթէ բալկաներ ամեն տեսակի և չափսերի:
2) Տանիքի թիթեղներ (кровельное желѣзо) Սիբիրիայի և այլ գործարաններից:
3) Ցեմենտ Նովորոսսիյսկի գործարաններից:

Մեծ քանակութեամբ գնողներին որոշ զիջում է արվում: Ընդունվում են պատուէրներ Անդրկովկասեան երկաթուղու բոլոր գծերի վրա յանձնելու պայմանով:

Նովորոսսիյսկի Գելենջիկ ցեմենտը առաջարկվում է վագօնով գնողներին Չորս րուբլի վաթսուն կոպեկ Թիֆլիսի կայարանում, իսկ ընկերութեան պահեստից Չորս րուբլի յօթանասուն կոպեկ:
(ե. հ. շ.) 1—10

Պրօվիզօր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ

Նոր նիւթը

Կատարելապէս փչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բուսնելուն. տալիս է մազերին իր բնական ու հաստատ տեսքը: Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի վնասակար նիւթ չը պարունակող:

Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում:

Արժէքն 1 րուբլի 25 կոպէկ:
(շ. 1 ան.) 13—50

Дозволено цензурою. Тифлисъ, 20-го августа 1904 г.
Տպարան «ՀԵՐՄԷՍ»
Типографія «ГЕРМЕСЪ» Мадатовская ул. № 15.